

ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ուսումնական տարեշրջանին մեջ, ամենէն շատ սիրուածը՝
Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան արձակուրդն է, որ շուրջ մէկ
ամիսով կը կանխէ տարեշրջանին առաջին կեսը:

Ամենէն շատ սպասուածն է, որովհետեւ երկուքէն երեք
շաբաթ արձակուրդ կը շնորհէ աշակերտութեան եւ
մանկավարժական դասի պաշտօնէութեան:

Ճշդեւնք սակայն, որ երկարատեւն է, որովհետեւ ան
կ'ընդգրկէ մէկէ աւելի տօներ եւ շարժառիթներ:

Անոնք են.-

- Ամերիկեան Ծնունդը՝ Christmas-ը,
- Նոր Տարին,
- Խթումը կամ ճրագալոյցը,
- Սուրբ Ծննդեան Տօնը եւ
- Հայկական Մեռելոցի Օրը:

Այժմ անդրադարձ՝ այդ բոլորին մասին:

Ամերիկեան Ծնունդը՝ (CHRISTMAS)

Արդարեւ, Գոհաբանութեան տօնը հազիւ վերջացած, քաղաքին՝ աւելի ճիշդը ամբողջ երկրին, ընդհանուր մթնոլորտը կը սկսի լեցուիլ Christmas-ի գալուստը աւետող յատուկ երաժշտութեամբ, երգերով, պատկերազարդումներով եւ լուսաւորումներով:

Մեծ ու փոքր, բոլորին մօտ եւ ամենուրեք զգալի կը դառնայ մօտալուս Christmas-ը:

Միացեալ Նահանգներու մէջ ամենէն ստուար հետեւորդներու թիւ ունեցող քրիստոնէական համայնքները՝ Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները, Ս. Ծննդեան տօնախմբութիւնը կը կատարեն Դեկտեմբերի 25ին:

Տօնը համաամերիկեան շէշտ կը ստանայ անոր համար նաեւ, որ Միացեալ Նահանգներու նախագահներն ալ միշտ պատկանած են Աւետարանական կամ Կաթողիկէ եկեղեցիներուն եւ այդ առիթով եկեղեցի երթալով, անոնք՝ նախագահները, կ'ընդունին Ս. Ծննդեան շնորհաւորութիւններ եւ ապա՝ իրենց կողմէ ժողովուրդին կ'ուղղեն բարեմաղթութիւններ:

Յայտնենք, որ տօնը՝ Զրիստոսի Ս. Ծննդեան խորհուրդով այնքան զարդարուն եւ գրաւիչ թափով կու գայ, այնքան շէշտուած գոյներով, որ պահ մը մոռացութեան կը մատնէ նոյնիսկ քրիստոնէական միջ-համայնքային տարբերութիւնները, անոնց կողմէ ընդունուած տարբեր թուականները, արարողութիւններու այլաձեւերը, աւանդութիւնները, եւայլն:

Ստեղծուած համաքրիստոնէական ընդհանուր մթնոլորտի մը մէջ, բոլոր համայնքները Ս. Ծննդեան գաղափարին մէջ միաձուլուած՝ կարծէք կ'եղբայրանան. կը տիրէ փոխադարձ սիրոյ, յարգանքի զուտ հոգեւոր զգացումներով լիացած տրամադրութիւն:

Սկստել տանք, որ մինչեւ 4րդ, 5րդ դար, աշխարհի գրեթէ բոլոր եկեղեցիները Ս. Ծնունդը կը կատարէին Յունուարի 6ին: Աւելի ուշ՝ հետագայ դարերուն է, որ ընկերային եւ վարչական տարակարծութիւններու եւ պարագաներու բերումով, եկեղեցիները իրարմէ բաժնուած են եւ Ս. Ծննդեան տօնը սկսած են կատարել տարբեր-տարբեր թուականներուն:

Հայաստանեայց եկեղեցին հաւատարիմ մնացած է սկզբնական դարերուն ընդունուած թուականին, որ է Յունուարի 6ը:

Ամենէն հիմնականը տօնին մէջ, անշուշտ, Զրիստոսի պարզ եւ խոնարի պայմաններու մէջ Ս. Ծննդեան գաղափարն է, որուն առիթով ամենաբարձր դիրքերու վրայ գտնուող կրօնապետեր՝ Սրբազան Պապը (Pope), կաթողիկոսներ, պատրիարքներ, թեմական առաջնորդներ, ականաւոր քարոզիչներ, պատարագ կը մատուցեն կամ պաշտամունք կը կատարեն եւ ապա՝ հոգեւոր ու հովուական պատգամ կը փոխանցեն հաւատացեալներուն:

Յիսուսի պարզ ու խոնարի ծննդեան դրուագը կարելի է կարդալ հետեւեալ Աւետարաններուն մէջ.

- Մատթէոսի Աւետ. 1, 18-25
- Ղուկասու Աւետ. 2, 1-20
- Յովհաննու Աւետ., 1, 9-18

ՆՈՐ ՏԱՐԻ ԿԱՄ ԱՄԱՆՈՐ

Նոր Տարին շատ մօտ ըլլալուն Ս. Ծննդեան տօնին, ոմանք կը խորհին, որ կրօնական տօն մըն է ան. բայց՝ այդպէս չէ:

Պատմութեան մէջ ամենէն հին շրջաններէն սկսեալ, բոլոր ժողովուրդներն ալ ունեցած են թաւալող ժամանակը տարիներու բաժնելու գաղափարը:

Ոմանք՝ գարնան սկիզբը նկատած են Նոր Տարի. ոմանք՝ հունձքի աւարտը. եւ այդպէս՝ աշխարհագրական տարբեր պայմաններու բերումով, ան տօնուած է տարբեր եղանակներու մէջ եւ՝ տարբեր թուականներու:

- Ֆրանսայի մէջ, ԺՁ. դարէն առաջ, Նոր Տարին կը սկսէր Չատիկին. 1560ին է, որ Շարլ Թ. թագաւորը կը հրամայէ Կաղանդը տօնել Յունուարի 1ին:

- Անգլիոյ մէջ, բողոքականներն են, որ 1731ին կը սկսին Կաղանդը տօնել Յունուար 1ին. անկէ առաջ՝ կը տօնուէր Դեկտեմբերի 25ին:

- Հայ ժողովուրդի պատմութեան մէջ, երկար ատեն ան տօնուած է հայկական Նաւասարդ ամսուն սկիզբը, որ կը համապատասխանէ ներկայի Օգոստոսի 11ին: Արդէն »Նաւասարդ«¹ բառացիօրէն կը նշանակէ Նոր Տարի: Այդ առիթով տեղի կ'ունենային մարգական, պարի, ասմունքի, երգասացութեան մրցոյթներ թագաւորի հովանաւորութեան տակ. տեղի կ'ունենային նաեւ ժողովրդային խրախճանքներ: Ներկայիս Հ.Ս.Մ.Կ. կը ջանայ վերակենդանացնել այդ հին ավանդութիւնը, մարգական մրցոյթներու եւ երիտասարդական պար-երեկոներու կազմակերպումով:

Հայերը ժամանակ մըն ալ իբր Նոր Տարի տօնած են գարնանամուտը, բնութեան վերածաղկումը նկատելով Նոր Տարուան նշան:

Ի վերջոյ՝ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի (1763-1780) տնօրինումով, հայ ժողովուրդն ալ վերջնականապէս Նոր Տարին սկսած է տօնել Յունուարի 1ին:

Իսկ մինչեւ այսօր, տակաւին բազմաթիւ ժողովուրդներ կան Միջին Արեւելքի, Ասիոյ, Ափրիկէի մէջ, որոնք կառչած կը մնան իրենց հին ավանդութիւններուն եւ Նոր Տարին կը տօնեն տարբեր ամիսներու մէջ:

- Հաստատենք սակայն, թէ անկախ թուականներու տարբերութիւններէն, բոլոր ժողովուրդներուն ալ համար, Նոր Տարին կը նկատուի մարդկային կեանքի մէջ կարեւոր հանգրուան: Ան՝ յոյսի, վերանորոգումի, ապագան ուղենշող ու ծրագրումի գաղափարներ կը խտացնէ իր մէջ:

Որքան ալ անցնող տարեշրջանը եղած ըլլայ բարի, յաջող, արդիւնաբեր, մարդիկ միշտ ձգտած են անելիին, առաւել՝ բարիին, առաւել՝ յաջողութեան եւ առաւել՝ արդիւնաւորութեան: Ի վերջոյ ո՞վ պիտի չուզէր, որ հինը փոխարինուի նորով: Հինը՝ անցեալն է, նորը՝ գալիքն է. իսկ մարդիկ՝ առաւելաբար կը ցանկան իրենց նպատակներու իրագործման հասնիլ գալիքին մէջ, ապագային մէջ:

- Հայ ժողովուրդը Նոր Տարին դիմաւորած է միշտ աւելի յոյսով եւ աւելի ջերմեանով: Ընտանիքներ իրենց զգացումները արտայայտած են ուրախ ու ճոխ սեղաններով, հարագատներու մէկտեղումով, նուէրներով, բարեմաղթութիւններով: Ժողովրդային-կրօնական գետնի վրայ, մատուցուած է պատարագ, հաւատացեալներ առաջին օրը դիմած են եկեղեցի եւ աղօթած են ու մաղթած՝ աշխարհի խաղաղութիւն, նուազ դժբախտութիւններ եւ առաւել սեր մարդկանց միջեւ:

- Իբրեւ աշակերտ-աշակերտուհիներ, անկասկած բոլորին մտածումը պիտի ըլլայ, որ Նոր Տարին դառնայ նոր եռանդով աշխատանքի եւ առաւել յաջողութիւններով բարձրացման նոր շրջան մը, ինչ որ ոչ միայն զիրենք պիտի ուրախացնէ, այլեւ հպարտութեան եւ երջանկութեան զգացումով պիտի լեցնէ ծնողներն ու բարեկամները եւ ուսուցիչները:

- Հաստատենք, որ աշխարհի բոլոր ժողովուրդները անսահմանօրէն բարի եւ լաւ զգացումներ կը տածեն Նոր Տարուան նկատմամբ: Գրողներ, նկարիչներ, երաժիշտներ միշտ իրենց լաւագոյն զգացումները արտայայտած են արուեստի ճամբով: Այսօր գոյութիւն ունի հարուստ գրականութիւն եւ ճոխ արուեստ Կաղանդի կամ Նոր Տարուան թեմայով:

Ձերմօրէն կը յանձնարարենք, որ ամէն ուսանող երկար արձակուրդի օրերէն մէկ-երկու ժամ տրամադրէ եւ այցելութիւն մը տայ հանրային գրադարան (Public Library) մը, կամ հայկական գրատուն մը, հետաքրքրուի համապատասխան գրքերով եւ հեքիաթներով եւ անձամբ ստուգէ, թէ որքան շինիչ ու դաստիարակիչ նիւթեր կան եւ թէ ի՞նչ հաճելի են անոնց ընթերցումները:

Հայ գրականութեան մէջ Նոր Տարուան թեմայով պատմուածքներ ունին ի միջի այլոց Յովհաննէս Թումանեան, Ալետիք Իսահակեան, Թլկատիսցի, Գեղարդ (տոքթ. Յ. Գազանճեան) եւ ուրիշներ:

Բազմաթիւ բանաստեղծներ ուշագրաւ քերթուածներ ձօնած են Նոր Տարուան: Կարդալ այդ քերթուածները, կը նշանակէ հաղորդուիլ մարդկային այնպիսի ազնիւ զգացումներով եւ մտածումներով, որոնք պիտի ուզէինք, որ նաեւ մերը ըլլային:

ԽԹՈՒՄ - ՃՐԱԳԱԼՈՅՑ

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի արձակուրդի օրերուն մէջ կ'իյնայ հայ ժողովուրդին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ յատուկ աւանդական տօնախմբութիւն մը, որ ԽԹՈՒՄ կամ ՃՐԱԳԱԼՈՅՑ կը կոչուի:

Թուականը որոշ է, Ս. Ծնունդէն մէկ օր առաջ, Յունուարի 5ի արեւամուտէն ետք՝ կամ իրիկունը, երբ կը մատուցուի Ս. պատարագ: Հայ ժողովուրդին համար սրտամօտիկ եւ ամենէն սիրուած կրօնական պահերէն մէկն է այս: Հաւատացեալները եկեղեցի կ'երթան, ուր Ս. պատարագէն ետք, առաջին անգամ ըլլալով կը նուագուին եւ կ'երգուին Յիսուսի Ս. Ծննդեան յատուկ շարականները:

Անմիջապէս ետքը, պաշտօնապէս կը յայտարարուի, որ Ծնունդ է այլեւս:

- ԲՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԲ

Հաւատացեալներ ուրախ մթնոլորտի մը մէջ կը շնորհաւորեն զիրար եւ կը պատասխանեն՝

- ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԲՐԻՍՏՈՍԻ:

ԽԹՈՒՄի Ս. պատարագի աւարտին, կարելի չէ չնկատել օրուան յատուկ աւանդութեան մը նկատմամբ ներկաներու նախանձախնդրութիւնը:

Հաւատացեալները եկեղեցիէն լուցուած (վառուած) մոմ մը (կամ լամբար մը) ապահոված, կը տանին տուն, որպէսզի ան վառ մնայ եւ լուսաւորէ տունը մինչեւ առաւօտ:

ԻՄԱՍՏԸ

Գիտենք, որ Յիսուսի ծնունդէն ետք, մոգեր նուէրներով եկան Բեթղեհեմ, բայց գիշերային մութ պայմաններուն մէջ, դժուարութիւն ունեցան գտնելու ծննդավայրը:

Ճրագալոյցի գաղափարը կը թելադրէ՝ մոգերուն եւ անոնց օրինակով նուէրներ տալու աւանդութիւնը պահել եւ այս պարագային՝ մինչեւ առաւօտ տունը պահել լուսաւորութեան մէջ, որպէսզի հայ ընտանիքներու նահապետները ՎՆ Կաղանդ Պապային պէս - երբ այցելէն իրենց հարազատներուն եւ նուէրներ բաշխեն, տունը շէն գտնեն:

Հոս նկատել տանք, որ հայ ընտանիքներուն մէջ աւանդութիւն էր, որ Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի նուէրները բաշխուին կամ փոխանակուին Խթումի գիշերուան հաւաքոյթներու ընթացքին:

Ս. ԾՆՈՒՆԴ՝ ՅՈՒՆՈՒԱՐ 6

Հայ եկեղեցւոյ գլխաւոր տօներէն է Ս. Ծնունդը, որ միշտ ժողովուրդին կողմէ տօնուած է խանդաղատանքով:

Թէ ո՞ր եւ ինչպի՞սի պարագաներու մէջ տեղի ունեցած է ան, նկարագրուած է արդէն Աւետարաններուն մէջ:

Յատկանշականը Ս. Ծնունդի պատմութեան մէջ, Աստուածայայտնութիւնն է իր պարզութեամբ: Ինչ որ Հին Կտակարանին մէջ այդ մասին նախատեսութիւն եղած էր, իրականութիւն կը դառնար: Յիսուս կը ծնէր Ս. Կոյս Մարիամէն, Բեթլեհեմի մէջ: Երկնքի մէջ ազդանշանը կը տրուէր աստղանշանով. անոր հետեւելով՝ արեւելքէն մոգեր կու գային նուէրներով, տեսնելու զայն, երկրպագութիւն ընելու եւ փառք տալու Աստուծոյ:

Տեսանք արդէն, որ Յունուարի 5ի իրիկունը, Խթումի արարողութենէն անմիջապէս ետք, կը յայտարարուի, որ Ս. Ծնունդ է արդէն:

Յունուար 6ի առաւօտուն, աւելի խումներամ հաւատացեալներու ներկայութեամբ, տեղի կ'ունենայ հանդիսաւոր Ս. պատարագ, որմէ ետք՝ պաշտօնապէս տօն է Սուրբ Ծննդեան:

Կը լսուին քաղցրահունչ շարականները Դպրաց Դասին կողմէ:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԾԱՐԱԿԱՆ	ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
<p>Խորհուրդ մեծ եւ սքանչելի Որ յայսմ աւուր յայտնեցաւ. Հովիւք երգեն ընդ հրեշտակս, Տան աւետիս աշխարհին:</p>	<p>Մեծ եւ սքանչելի է խորհուրդը Որ այսօր յայտնուեցաւ. Հովիւներ հրեշտակներուն հետ կ'երգեն, Եւ աւետիս կու տան աշխարհին:</p>
<p>Ծնաւ նոր արքայ Ի բեթլեհեմ քաղաքի Որդիք մարդկան օրհնեցէք, Չի վասն մեր մարմնացաւ:</p>	<p>Ծնաւ նոր արքայ մը Բեթլեհեմ քաղաքին մէջ. Ո՛վ ժողովուրդք, օրհնեցէք, Որովհետեւ մեզի համար մարմնացաւ:</p>
<p>Անբաւելին երկնի եւ երկրի Ի խանձարուրս պատեցաւ. Ոչ մեկնելով ի հօրմէ, Ի սուրբ այրին բազմեցաւ:</p>	<p>Ան՝ երկնքին ու երկրին մէջ անբաւելին, Խանձարուրի մէջ փաթթուեցաւ.. Եւ առանց Հօրմէն բաժնուելու Սուրբ այրին մէջ բազմեցաւ:</p>

Ծննդեան տօնին առթիւ հաւատացեալներ կը սիրեն Ս. հաղորդութիւն առնել:

Այդ օրը Ս. պատարագէն ետք, մեծ թիւով ներկաներ կարգի կը կենան եկեղեցւոյ խորանին առջեւ եւ կ'ընդունին Ս. հաղորդութիւնը:

Սորովութիւն է, որ հայկական դպրոցներու աշակերտները, որպէսզի որբէւ պատճառով չզրկուին իմաստալից այդ արարողութենէն, արձակուրդէն առաջ հաւաքաբար կ'առաջնորդուին եկեղեցի, ուր ծխատըր քահանայ հայրը Ս. հաղորդութեան իմաստը բացատրելէ ետք, կը կատարէ համապատասխան արարողութիւնը:

Ներկայիս, ազատ եւ անկախ մեր հայրենիքին մէջ, հպարտութեամբ պետք է հաստատել, որ բոլոր այն երկիրները, որոնք բարեկամ են Հայաստանին եւ ունին դիւանագիտական կապեր, անոնց դեսպանները Ս. Էջմիածին երթալով կը շնորհաւորեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շատեր նաեւ ներկայ կը գտնուին Ս. Ծննդեան պատարագին:

Պետութեանց ներկայացուցիչները կը շնորհաւորեն նաեւ Հանրապետութեան նախագահը, վարչապետը եւ խորհրդարանին նախագահը:

Դարձեալ հպարտութեամբ պետք է նշել, որ 2004 թուականէն սկսեալ, նաեւ Լիբանանի՝ մէջ, Ս. Ծննդեան տօնը՝ Յունուարի 6ը, յայտարարուած է ոչ աշխատանքի պաշտօնական տօն՝ ամբողջ Լիբանանի համար. եւ այդ օրը՝ Հանրապետութեան նախագահը կամ ներկայացուցիչը, վարչապետը, խորհրդարանի նախագահը, բազմաթիւ նախարարներ, ինչպէս նաեւ իսլամ եւ քրիստոնեայ կրօնապետեր եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններ Անթիլիասի մայրավանքը երթալով, կ'այցելեն Հայոց Վեհափառ Հայրապետին, եւ Ս. Ծնունդի ուրախ առիթով, կը յայտնեն իրենց ինդակցութիւնը:

ՄԵՌԵԼՈՑ

Հայաստանեայց Եկեղեցին իր հինգ մեծ տօներուն, կամ Տաղաւարներուն յաջորդ օրը կը նկատէ Մեռելոց: Յիշատակի օր մը, երբ հաւատացեալները հրաւիրուած են, կրօնական մասնաւոր կարգի մը ներկայ գտնուելով՝ աղօթելու իրենց հանգուցեալ հարազատներուն համար, եւ ապա, գերեզմանոց այցելութիւն տալով՝ մեռելներու շիրիմներուն խունկ վառելու եւ յարգելու անոնց յիշատակը:

Մեռելոցը յատուկ անանդութիւն է Հայաստանեայց Եկեղեցիին մօտ:

Հայ ժողովուրդը կը հաւատայ, որ մարդկային բարոյական պարտք է ու պարտաւորութիւն՝ յիշել մեզմէ յաւետ բաժնուած սիրելիները, որոնք թէ՛ անձնապէս իրենց ընտանիքներուն, թէ՛ հաւաքականութեան համար, աշխատեցան, զոհողութիւններ կատարեցին, որ կեանքը լեցուի բարիքներով:

Գ., Դ., Ե. կարգեր

ՆՈՐ ՏԱՐԻ

ՉԱՐԵՅ ԽՐԱԽՈՒՆԻ

- Բարի եկաւ ՎՆ հազար բարով
Միւսը կ'երթայ - երթայ բարով
Կից մ'ալ ետեւէն...

»Անցեալն է թաղուած
Ապագան է լոյս...
Երթանք միշտ յառաջ
Դեպի կեանք եւ յոյս...«

- Մինչեւ որ օր մ'ալ
Յանկարծ ետ նայինք
Տեսնենք անցեալին ջահերը վառուած:

31-12-54

Գ., Դ., Ե. կարգեր

ԿԱՂԱՆՂՆԵՐ ԿԱՆ

ԻԳՆԱ ՍԱՐԸԱՍԼԱՆ

Կաղանդներ կան համակ լոյս
Կաղանդներ կան համակ սեր
Կաղանդներ կան համակ յոյս

Ձեր կաղանդներն համակ լոյս ՎՆ սեր ՎՆ յոյս

Կաղանդներ կան համար թախիծ
Կաղանդներ կան համակ նողկանք
Կաղանդներ կան համակ կսկիծ

Իմ Կաղանդներս...

Ձգենք հիմա իմ Կաղանդներս...

Ձեր Կաղանդներն յար - յաւիտեան երջանկութիւն

30-12-1963

Գ., Դ., Ե. կարգեր

ՅՐԱԺԵՇՏԻ ՊԱՏԳԱՄ

ՍԻՐՎԱՐԴ ԻՆՃԵԵԱՆ

Նոր Տարին հարցուց
Անցնող հին տարուան.

- Ի՞նչ պատգամ ունիս,
Որ գայն փոխանցեմ
Ներկայ մարդկության:

Յին տարին, մարող
Յելքովն իր վերջին,
Այսպես հառաչեց.

- Խնդրեմ, ըստ բոլորին,
Թե որքան ալ նո՛ր ըլլայ այս տարին,
Շուտով պիտ' դառնայ
Ա՛ն ալ ինձ պես հին:
Թող մարդիկ ներկան
Ճիշդ այնպե՛ս ապրին,
Որ երբ »վաղը« գայ,
Չըսեն՝ մեղք որ մենք
Չըրինք կարելին:
Կեանքը կայան մ'է,
Ուր նորը կ'իջնէ,
Ու անվերադա՛րձ հինը երբ մեկնի,
Թող մա՛րդ չզոյջայ ու ցաւով չըսէ,
»Աւա՛ղ, կրնայի, բայց ինչո՞ւ չըրի...«:

»Կեանքն իր ճամբով« հատորէն

Ձ., Է., Ը., կարգեր

ԾՆՈՒՆԴԻ ԾԱՌ

ՉԱՐԵՅ ԽՐԱԽՈՒՆԻ

Օ՛ գիտեմ

Ձեր Կաղանդի ծառին վրայ

Փայլուն սիրուն գոյնզգոյն

Ամեն մեկը կեանքով լեցուն

կեանք մը արժող

կեանքի մը չափ համով հոտով

Հարիւրաւոր պտուղ կայ

Չանգակներ կան որ կ'աւետեն ամեն ինչ

Թռչնիկներ կան որ կ'ոստոստեն սրտէ սիրտ

Ծաղիկներ կան յոյսերու պէս փողփողուն

Ջուրակներ կան հոգեթափանց լոյսերէն իսկ թրթռուն ՎՆ

Բայց այս բոլորն այնքան ալ

Կարելոր չեն ՎՆ օ՛ գիտեմ

Կաղանդ պապան պիտի ըսէք

այն ալ չէ՛ -

Ամենէն վերն աննշմար

Ամեն ատեն այնտեղ դրուած անգիտակից վարժութեամբ

սովորաբար մոռցուած

Հրեշտակ մը կայ փոքրիկ

Որ երբ գտնէ ձեզ ձեր ծառին հետ մինակ

գիշեր մը Սուրբ Ծնունդի

Պիտի խօսի պիտի ըսէ

կեանքը ես եմ յոյսը ես

ճշմարտութիւնն ու իմաստն եմ գերագոյն

վերապրումիդ վերյառնումիդ փաստն եմ ես...

Պիտի խօսի ՎՆ ու ձեր ծառին լուսավառ

Բոլոր փայլերն ու գոյները պիտի մարին հրաշքով

Պիտի մնաք դեմ առ դեմ

Այն լոյսին հետ որ կը դողայ կայլակին մէջ ցոլացիկ

Երանութեան արցունքին...

Ձ., Է., Ը. կարգեր

28-12-1964

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐ

ՉԱՅՐԱՏ

Ամեն ին ծայրեն վերսկսելու
Ի վերջոյ նորեն այսպէս ըլլալու

Տօնն է այս գիշեր:

Լոյսը վառեցէք - եթէ չի բաւեր
Ձեզ տաքցնելու ձեր լոյսը ներքին

Տօն է այս գիշեր:

Պահ մը ամեն ինչ վերջացնելու
Ամեն ինչ ծայրեն վերսկսելու

Տօնն է այս գիշեր:

Յոյսեր վառեցէք - եթէ չեն բաւեր
Ձեզ տաքցնելու ձեր յոյսերը հին

Տօն է այս գիշեր:

Ի վերջոյ նորեն այսպէս մնալու
Քիչ մը աւելի յուսալքուելու

Տօնն է այս գիշեր:

Չուր տեղը վատնուած օրերն յիշելու
Գոյութեան տխուր հաշուեկշիռին

Տօնն է այս գիշեր:

Լոյսեր ու յոյսեր վառեցէք գոյն գոյն
Երգեր երգեցէք հինէն ու նորէն

Տօն է այս գիշեր:

Գոյատեւելու տօնն է այս գիշեր:

Չ., Է., Ը. կարգեր

ԵՐԳ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ

ՀՐԱԶԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Երկնուց շուշան ձիւն կու գայ,
Երկրին խաղաղ քուն կը գայ,
Բախտ ու բարիք գիրկն առած՝
Նոր տարին մեր տուն կը գայ:

Կը գայ ոսկէ լոյսի մէջ,
Կ'երգի ուրախ յոյզի մէջ,
Գալիք բոլոր օրերի
Շող ու շքեղ յոյսի մէջ:

Կը գայ... լաւ, ես ո՞ւր գնամ,
Ամէն տեղ էլ հիւր գնամ
Ընկերո՞ջ մօտ, եարի՞ մօտ,
Երգելո՞վ, թէ լուռ գնամ:

Ամէն տեղ էլ հարազատ,
Սերը՝ վարար, սիրտն ազատ,
Ամէն տեղ էլ հայրենի
Հանդեսները շողագարդ:

Ա՛խ, թող իջնի նոր տարին
Օջախներին, սրտերին,
Ես ամենքի կրծքի տակ
Պահուած՝ կ'երգեմ մտերիմ:

2., Է., Ը. կարգեր

ԿԱՂԱՆԴՉԵՔՆԵՐՍ

ԳԵՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ

Դուք որ, ընկեր կամ թշնամի,
Տակաւին զիս կը կանչէք,
Ինչ որ ունիմ ձեզի կու տամ մի առ մի,
Ամանորի այս գիշերով,- Կաղանդէք...

Ձեռքերս՝ որոնք մերթ միացան
Աղօթելու համար լուռ,
Որոնք յաճախ հարուածեցին, եւ սակայն
Մի՛շտ անկաշառ մնացին, մի՛շտ ալ մաքուր...

Մատներս՝ որոնք գալարեցան,
Մերթ ընդելոյզ, յուսալիք,
Բայց երբեմն ալ քնարներէ՛ քաղցրաճայն
Ըւ մարգերէ՛ քաղեցին յոյզ ու ծաղիկ...

Չոյգ աչուրներս՝ որոնք բացին
Յոգիս երկու ռահի վրայ...
Որոնք լացին ցաւն ուրիշին,
Իբր ապալեր ճամբաներու ռահվիրայ,

...ճակատս անբիծ՝ որ շատ անգամ
Գիտցաւ շիկնիլ ձեզ համար...
Յոգիս հպարտ՝ որ բոլորին բարեկամ
Եղաւ, մանկան հետ՝ զուարթուն խոնարհ...

Ու սիրտս իմ, սիրտս երիտասարդ՝
Չոր առաջ նետեցի,
Ու նետեցի՝ որ տրորէ՛ք զայն ազատ,
Որպէսզի բոյրն իր մխայ քա՛ղցր աւելի...

Դուք որ, ընկեր կամ թշնամի,
Տակաւին զիս կը կանչէք,
Ինչ որ ունիմ ձեզի կու տամ մի առ մի,
Ամանորի այս գիշերով,- Կաղանդէք...

2., Է., Ը. կարգեր

ԴԻՄՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՈՒՆ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Դո՛ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար պահանջով,
իբրեւ պատասխան նրանց սրսփուն ակնկալիքի.
Դո՛ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողդոջուն կանչով,
իբրեւ պատասխան նրանց կարիքի.
Դո՛ւ, որ ոտներդ խճողել ես դեռ անցեալի ցանցով,
մինչդեռ ձեռքերդ մեկնել ես արդէն կանչող գալիքին,-
արի՛, Նո՛ր Տարի,
գալուստդ բարի՛:

Արի՛, Նոր Տարի,
բայց... այնպէ՛ս արի,
Որ ատոմական այս ահեղ դարի
գոռ ժամացոյցը ինքն իրեն լարի
մայրացած հարսի սրտատրոփի համաչափութեամբ,
եւ նրա անտես սլաքները զոյգ
իրենց վիրաւոր թեւաթափութեամբ
ոչ թէ մեզ կրկին
քարանձաւների անաչ խոռոչը մատնացոյց անեն,
այլ Տիեզերքի անկոխ դաշտերին
մեր զոյգ աչքերի հայեացքը տանեն...

Արի՛, Նո՛ր Տարի,
բայց... այնպէ՛ս արի,
որ աւելանայ աշխարհի բարին,
եւ այդ աշխարհի բախտի վրայով
խելօրէն ձգուած մետաղալարին
լարախաղացի ծպտուած տեսքով Չա՛րը չպարի՝
ողջ մարդկութեանը դնելով ծանօթ ծաղրածուի տեղ...

Ձիւնն է վար իջնում
ու ծածկում մայթե՛ր, ծառեր ու թիթեղ:
Իսկ ուրիշ մի տեղ
անձրեւն է կրկին
երկինք ու երկիր մեկմէկու հինում,
կարծես թէ հսկայ տաւիղ է շինում,
որի հոսանուտ լարերի վրայ
իրիկնամուտի տաւղահար քամին
մրսած մատներով

պիտի նուագի հինաւորց տաղեր՝
ի վերայ սիրոյ,
վասն խնդութեան,
վասն մարդկային ոգու խենթութեան:

Անձրեւի տեսքով,
ձեան կերպարանքով
այդ դու ես գալիս:
Արի՛, Նո՛ր Տարի,
գալուստդ բարի՛:
Բայց... այնպէ՛ս արի,
որ անձրեւը յորդ սրբելով տանի
ոչ միայն կեղտը յոգնած մայթերի,
այլ նաեւ փոշին ու մուրը հոգու,
այլեւ խաւար խոհ ու խարդախ խոկում,
եւ ձիւնը իջնի որոգայթների՛,
ծանր ամօթից շիկած այտերի՛,
ուրացումներից դեղնած-ժանգոտած սրտերի՛ վրայ
եւ իր այդ ճերմակ բարութեամբ շռայլ
մարդուն մարդու դէմ պարզերե՛ս անի...

Արի՛, Նո՛ր Տարի,
բայց այսպէ՛ս արի,
եւ ոչ թէ այնպէ՛ս, որ ձիւնը ճերմակ
դառնայ վարակի սաւան ու վերմակ,
եւ որ անձրեւի ջուրն աստուածածին
մարդու արիւնը ջրի վերածի,
ու ճառագայթը, ճառագայթն անբիծ
մկրտուի իբրեւ մի ահեղ ու պիղծ
Նոր հիւանդութեան դիւային անուն,
որից մինչեւ իսկ մահն է մահանում...

Արի՛, Նո՛ր Տարի,
գալուստդ բարի՛,
եւ արթնացրո՛ւ քո թնդուն քայլքով
ուշ մնացածին,
քնով տարուածին.
տո՛ւր ապաքինում հոգով ցաւածին,
հիասթափուածին՝ Նոր մի հիացում,
սիրասթափուածին՝ մի Նոր միացում.
ձեռքից հաւատը փախուստ տուածին,
իբրեւ Նոր Տարուայ բաղձալի Նուէր,
տուր Նոր հաւատի կապակուռ թելեր,
մանկանը՝ մեծի մտքի լիացում,
մեծին՝ մանուկի անարատութիւն,
տափարակներին՝ Արարատութիւն,

իսկ Երկրագնդին՝ մի առատութիւն,
որ նրա վրայ Քաղցը այսուհետեւ
չունենայ ո՛չ մի կայսրութիւն ու գահ,
ու Սարսափն իրեն թագակիր չգգայ.
որ Ազատութիւնն իր բառէ գունեղ շապիկը ճեղքած
տրուի ճախրանքի,
ու Մարդն ազատուի իր հին գերութեան նոր յաճախանքից,
ու Մարդն այսուհետ ոչ մի տեղ երբեք չգունաւորուի.
Եւ որ այլեւս ո՛չ մի ժողովուրդ,
ո՛չ մի ազգ ու ցեղ
պատմութեան քափից ու սեւ մրուրից չթունաւորուի,
դառնայ լիազօ՛ր, դառնայ լիիրա՛ւ,-
ու մենք, վերջապէ՛ս, հասկանա՛նք իրար,
ամենքս, բա՛ւ է, հասկանանք իրար:
Նաեւ հասկանա՛նք,
որ մեր իսկ արեան գնդիկը մանր
այս Երկիր կոչուած գնդից ակելի մեծ է ու ծանր...

2., Է., Ը. կարգեր

ԵՐԳ ԿԱՂԱՆԴԻ

Երջանկայիշատակ Շնորհք Արք. Գալուստեանին
Խաչաշնորհ Պատրիարքին Հայոց Թուրքիոյ

ՉԱՐԵՅ ԽՐԱՅՈՒՆԻ

Եթէ ամէն

Այր կին մանուկ - ամէն մարդ

Ամբողջ աշխարհն ՎՆ հինգ միլիառ մարդ - ամէնքն ալ

Օր մը յանկարծ

Միտքը խռով սիրտը գինով ազատութեան հովերէն

Դուռ պատուհան բանային

Փողոց շուկայ հանդ ու դաշտերն իյնային

Միաբերան ահեղագոռ պոռային.

- Խաղաղութիւն խաղաղութիւն խաղաղութիւն

Եղբայրներ...

Օր մը յանկարծ

Քաղաքացի կամ շինական ՎՆ ծեր երիտասարդ - ամէն

մարդ

հինգ միլիառ կամ հինգուկէս

Կուրծքը բացած շունչը խառնած խաղաղութեան

ձայներուն

Եթէ իջնէ հրապարակ

Ձեռք ձեռքի տայ, շղթայ կազմէ - շրջանակ

Շուրջպար բռնէ աշխարհի շուրջ ՎՆ պարէ ցատքէ համարձակ

Ու երգէ.

- Ուրախութիւն ուրախութիւն ուրախութիւն

Եղբայրներ...

Յետոյ դարձեալ

Եօթնէն մինչեւ եօթանասուն - աւելի՛

Մեծ ու պզտիկ մանչ ու աղջիկ - ամէն մարդ

գուցէ նոյնիսկ վեց միլիառ

Հոգին լեցուած աչքերն յորդած ուրախութեան ծովերով

Եթէ վազէ՛ թւաբաց

Ողջագուրէ ո՛վ որ ելլէ իր դիմաց

Չայն համբուրէ սիրարբած ՎՆ տօնէ՛ այդ օրն անմոռաց

Ու կանչէ.

Ազատութիւն խաղաղութիւն ուրախութիւն

Եղբայրներ

Օ՛ այն ատեն ՎՆ իրաւ որ

Կաղանդ կ'ըլլայ ամէն մարդու ամէն օր:

2., Է., Ը. կարգեր

ԿԱՐԵՆԱՅԻՆՔ...

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Կարենայինք մենք ամեն ինչ
Ժամանակին գնահատել,
Կարենայինք
Փուչ անպետքից լաւը գատել,
Լաւն ազատել
Կարենայինք:

Փակ աչքերով չգնայինք
Մի սխալից դէպի մեկը.
Զթողնէինք ուղիղ ճամբան
Ու չընտրէինք ծուռն ու թեքը.
Ասենք սխալ ով չի արել,
Ով է կեանքն իր անթեք տարել,
Միայն թէ ճիշդ ժամանակին,
Սխալ ճամբան ճշդով հատել
Կարենայինք:

Մեր մեղքերը ուրիշներին
Զփաթաթել կարենայինք,
Մեր անհոգի քայլի համար,
Մեզ նախատել կարենայինք.
Արդար, ազնիւ օտարի պէս,
Մեր հարազատ
Որդուն դատել
Կարենայինք:

Կարենայինք չկորցնել
Մեր մէջ եղած վեհն ու թանկը,
Թանկ պահէինք այսքան գորովն,
Այսքան ուժերն,
Այսքան շանքը,
Որքան պիտի շահեր կեանքը՝
Կարենայինք:

Չ., Է., եւ Ը. կարգեր

SOLUՉԱՆԳ

2. ԽՐԱԽՈՒՆԻ

Ամեն տարի
Տօնածառին երբ նայիմ
Ես գայն տարբեր կը տեսնեմ ՎՆ

ինձ կը թուի թէ լեռ մ'է ան հզօր յոյսի հաւատքի
թէ բուրգ մըն է - կոյտ կարօտի ու սիրոյ
կամ սանդուխն է դալարաւետ որ դէպի վեր կը տանի...

Այս տարի
Ան ինձ համար զանգակ մըն է կանաչացած հին արոյրէ
ոսկի արծաթ դրուագներով
գոյն գոյն ձեւ ձեւ գոհարներով աշխատուած

Որ ով գիտէ
Հայրենական ո՞ր լեռներու կողին թառած սուրբ վանքէն

Ո՞ր տաճարէն հոյազանգ
Դարակուտակ ղօղանջներն իր սեգ կուրծքին տակ ամփոփած
Եկեր բազմեր է այստեղ ՎՆ թուխսի նստած հաւու պէս
Ու կը թողու որ զարդարեն տօնախմբէն գովերգէն
Մինչդէռ ինք
Ականջ դրած կը սպասէ
Հարուածներուն որոնք կտուց պիտի զարնեն անխափան
Ճակատագրի ժամացոյցէն անյեղի...

Ծառին վրայ
Փոքրիկ նաշխուն զանգակիկները բոլոր
Կը թրթռան կը դողդղան կը թրվռան արդէն իսկ
Ղօղանջով մը հեռաւոր...

21-12-1985

Չ., Է., եւ Ը. կարգեր

ԲԵԹՂԵՏԵՄԻ ԱՍՏՂԸ

Մ. ԻՇԽԱՆ

Բեթղեհեմի աստղը պայծառ
Ալ չի շողար
Երկինքն ի վար՝
Սուրբ մտւրին վրայ խոնարի:

Բեթղեհեմի աստղը անհուն
Ո՞ր ամպին տակ
Բազմակուտակ
Այսպէս անհետ մտաւ ի քուն:

Բեթղեհեմի աստղին տեղ հին
Ամէն ժամ նոր
Արիւնածոր
Աստղեր կու գան ու կը մարին...

Բեթղեհեմի աստղը սակայն
Միշտ կը մնայ
Հոգեմայ
Միակ ժպիտն աստուածութեան:

Բեթղեհեմի աստղը պայծառ՝
Աչքը մարդուն
Քուն թէ արթուն
Դեռ կ'որոնէ ցնորահար...

Բեթղեհեմի աստղը վառող
Ո՞վ անհուն Լոյս
Ուղեկորոյս
Մարդոց դարձեալ տո՛ւր յոյսի շող:

Բեթղեհեմի աստղը թաքուն
Կախե՛ նորէն
Մեր երկինքէն
Եւ տո՛ւր յերկիր խաղաղութիւն...

Գ, Դ., եւ Ե. կարգեր

ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

ՍԱՐՄԵՆ

Կանգնել եմ ահա Նոր Տարուայ շեմքին՝
Յոգիս տենչերով, երազներով լի.
Գալիքի ճամբան կանչում է կրկին՝
արարիչ ու խենթ խիզախումների:

Ու թելեր առած հայրենի հողէն,
Յոյսերիս հուրը պահելով անմեռ՝
Գնում եմ դէպի բարձունքն աստղալից,
Դէպի նոր ափեր, նոր հեռաստաններ:

Ինձ չի մօտենայ ցուրտը ծերութեան,
Մաքառման գէլքս ես չեմ դնի ցած,
Մինչեւ չտեսնեմ, իմ մա՛յր Յայաստան,
Իղձերդ բոլոր իրականացած:

Գ, Դ., եւ Ե. կարգեր

ՆՈՐ ՏԱՐԻ

Բ. Թ.

Խաղով ու տաղով,
Ծափ ու ծիծաղով
Ահա՛ եկաւ նոր տարին,
Բերաւ երգեր,
Անոյշ միրգեր
Մեր երջանիկ աշխարհին:

Կ'ապրինք ուրախ ու խնդուն
Տօնածառին շուրջ-բոլոր,
Տօնածառն է փայլփլուն՝
Իր աչքերով բիւրաւոր:

Կ'երգենք ահա՛ ցնձագին,
Մենք՝ դեռատի պարիկներ,
Կարծես աստղերն երկնքին
Մեր բակին մէջ են ինկեր:

Հագած ճերմակ վերարկուն՝
Ձմեռ պապին մեր բարի
Կ'ըսէ ձայնովն իր հնչուն.
- Շնորհաւո՛ր նոր տարի...

Գ, Դ., եւ Ե. կարգեր

ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ ՍԵՒԱՄՈՐԹ Է

Յ. ԳԵՂԱՐԴ

Քանի մը օրէ ի վեր, մայրս ինծի կ'ըսեր, որ Կաղանդը մօտ էր, ու եթէ խելօք կենայի՝ »աղուոր բաներ« պիտի ունենայի: Առաջին տարին ըլլալով, փոքրիկ սիրտս ալեկոծ, հարց կու տայի՝ ո՞վ էր »Կաղանդ Պապան«, ազգակա՞ն էր մեզի, ուրկէ՞ պիտի գար, գիտե՞ր մեր տունը, կրնա՞ր շալկել բոլորին խաղալիքները:

Մայրս շատ արժանիքներ կը վերագրեր այդ անծանօթին. կ'ըսեր, թէ խոշոր տետրակի մը մէջ գրած էր բարի ու չար տղոց անուններն ու հասցէները. չարերը պիտի գրկեր, բարիները վարձատրեր...

Սպասման այդ երեկոներէն մէկը, գացած էինք հանրային պարտեզ, միակը Պէյրուօթի մէջ՝ Ուաթ-ուաթ թաղին մօտ, եւ որ հիմա ալ կայ:

Կը քալէինք ծառուղիներէն, երբ հանդիպեցանք ծառի մը բունին կռթնած սեւ արձանի մը: Մօտեցանք. ան սկսաւ ժպտիլ ու շարժիլ դէպի մեզի: Բնագղաբար մօրս ձեռքը աւելի սեղմեցի. իսկ մայրս ու իր ընկերուհին կանգ առին արդէն, »Յիսուս Զրիստոս« մրմնջելով:

Մօտեցողին գլուխը կարմիր թաղիքէ գլխարկ մը կար, մէջքին՝ փայլուն սուր: Բայց մեր վախը երկար չտևեց. աչքերը չար չէին, քաղցրութիւն մը ունէին. ճերմակ ակռաները լայն շրթներուն միջեւ կը փայլէին:

Երբ խափշիկ զինուորը մեզմէ երկու մէթր անդին կանգ առաւ, եւ հասակը հասակիս հաւասարեցնելու համար կկուզ ըրաւ, մայրս անշուշտ չհասկցաւ անոր ըսածը, բայց մայրական բնագոյով զգաց. ինծի գուրգուրալ ուզող անծանօթը գաւակի, ընտանիքի կարօտէն միացող սիրտ մը ունէր... ու քաջալերելով՝ »Գնա, տղա՛ս,- ըսաւ,- բարի է«:

Տոտիկ-տոտիկ մօտեցայ. ան արդէն հանած էր գլխարկը, մէջը դրած խոշոր շոքուլա մը, նաեւ խորոված շագանակ, ու կ'երկարէր ինծի: Մօրս ժպտուն աչքերը հրաւիրեցին զիս որ առնեմ:

Ի՛նչ ուրախ էր խափշիկը, ու ինչ անուշ՝ մատներուն դողը, երբ զանոնք գուրգուրանքով կը դպցներ մագերուս ու այտերուս:

Չգոհացաւ շոքուլայով: Ձեռքը տարաւ ծոցը, եւ դուրս քաշեց սեւափայլ խաղալիք մը, որ տեղաւորեց ձեռքիս մէջ:

Տարիներ ետք միայն պիտի հասկնայի որ այդ արձանիկը՝ լայն շրթունքով, սուր ականջներով, ճերմակ ու տարօրինակ աչքերով՝ սեւ փղոսկրէ թանկագին զարդ մըն էր, գուցէ զինուորին իսկ ձեռքով շինուած, հայրենի Ափրիկէի մէկ անկիւնը...

Քիչ ետք, երբ միացայ մօրս, առածներս գրպանած, ու բռնեցիք վերադարձի ճամբան, սեւամորթ զինուորը դեռ ծառին տակ էր, կարօտավառ կը նայէր ետեւես, ու ձեռք կ'ըներ:

»Աստուած տունի-ընտանիքի տերը դարիպ չընէ՛«, - ըսաւ մօրս ընկերուհին:

»Մամա՛, - հարցուցի խանդավառ, - ա՞ն է Կաղանդ Պապուկը«:

»Տեսա՞ր, բարի եղար, ու Կաղանդ Պապան ինչե՛ր դրկեց քեզի«, վրայ բերաւ մայրս՝ օգտուելով առիթէն:

Բայց ես մօրս պատասխանին չէի կապեր համոզումս:

Հանրային պարտեզի ծառին տակ շոքուլա, շագանակ ու խաղալիք տուող խափշիկ բարի զինուորը իմ մատղաշ մտքիս մէջ արդէն առած էր Կաղանդ Պապուկի անջնջելի գիծեր: Կաղանդ Պապուկ մը, որ հեռու իր գաւակներէն ու երդիքէն, կը սիրեր բոլորին գաւակները, բոլոր երդիքները:

Գ., Դ., Ե. կարգեր

ՄԱՅՐԻԿԻ ՄԸ ԿԱՂԱՆԴՉԵՔԸ

ՎԱՅԷ ՀԱՅԿ

Նոր Տարուան եւ Ծնունդի գուարթ օրերուն էր: Աննման խանդավառութիւն կար բոլոր տուներուն եւ գրեթէ բոլոր սրտերուն մէջ: Նուէրներու եւ փոխ առնուած շնայլ մաղթանքներու անձրեւ մըն էր բռներ եւ կու գար անդադար:

Կէսօրէ մը յետոյ, իրիկուան աղօտ շողերը տակաւին չսկսած՝ երկաթուղիի մը կայարանէն կ'անցնէի արտօրանքով:

Նշմարեցի որ զինուորներու հսկայ բազմութիւն մը հաւաքուած է եւ կը շարժի անհանդարտ ծովու ալիքներուն նման:

Կու գա՞ն արդեօք թէ կը հեռանան, խորհեցայ եւ ինքնաշարժը կեցուցի:

Այս կայարանը մեր քաղաքի կեդրոնական մասին մէջ շինուած է: Օրական հազարաւոր անցորդներ կու գան ու կ'անցնին: Ո՛չ ոք մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դարձնէ զայն:

Բայց զինուորական համազգեստներու մէջ մտած պատանիներու ստուար այս բազմութիւնը արտակարգ տեսարան մը կը բանար:

Նկատեցի որ ամէն անցորդ այդ կայարանի փողոցէն անցնելու ատեն իր քայլերը՝ եւ եթէ ինքնաշարժով է, իր անիւները կը դանդաղեցնէ, աչքերը լայն-լայն կը բանայ եւ տեսակ մը անհաճելի դիմագիծ մը առնելով կը շարունակէ ճամբան: Իրաւամբ մարդիկ կ'ատեն պատերազմը:

Այդ պահուն իմ ուշադրութեանս առարկան դարձաւ զինուորներու խումբէն անջատուած եւ ցանկապատի մը կռթնած տղեկ մը, որ ծանօթ երեւցաւ ինծի, եւ որ մտածկոտ եւ անհամբեր սպասումի մը մէջ ամփոփուած կեցեր էր միս-մինակ:

Քալեցի ուղղակի իր մօտ, ծանօթ էր: Ձեռքս երկարեցի ժպտագին եւ՝

- Հըլօ՛, Երուանդ, ինչո՞ւ կը սպասես հոս, ի՞նչպէս ես:

- Օ՛,- ուշաբերեցաւ տղան եւ ուրախութիւնը յայտնեց,- քանի մը օրուան համար վագանցի դրկեցին մեզ, չեմ գիտեր, »Ծնունդ«, »Նոր Տարի« է ըսին... քանի մը հոգի հոս պիտի ձգեն եւ մեկնին ուրիշ տեղեր: Ես ալ տուն երթալու եմ... բայց...

- Մէկը պիտի գա՞յ քեզ առնելու:

- Չէ՛, մեր կողմերը գիտես, 15-18 միոն հեռու է, հանրային կառք չերթար, թեքսի մը առնելու համար ալ մեծ գումար կը պահանջեն, եւ ես, շիտակը խօսելով, վրաս դրամ չունիմ:

- Հոգ մի՛ ըներ, Երուանդ, ես կը տանիմ. շատ լաւ գիտեմ ձեր այգին ալ, տունն ալ, հայրիկդ ու մայրիկդ ալ:

- Այո, գիտեմ, շնորհակալ եմ. ի՞նչ ընեմ, բանակին մէջ ուտելիքը լաւ է, ամսական բան մըն ալ կը վճարեն, բայց ամէնն ալ մայրիկիս կը դրկեմ: Սիւալ չհասկնաս, ատոր համար վրաս շատ քիչ դրամ կրնամ պահել,- անելցուց:

Համակրելի հայ տղեկ մըն էր Երուանդ, այդ խօսքերուն վրայ համարումս կրկնապատկուեցաւ: Գիտէի որ հազիւ տասը էջքըր հող ունէին, մշտապէս ծանր պարտքի տակ: Հայրը կէս հիւանդ, տղուն զինուոր տարուելէն յետոյ աւելի ծանրացած ու փոխադրուած էր չքաւորներու հիւանդանոցը: Մայրը կը մնար միս-միսակ, տանջալից կեանքի մը տակ կքած: Գրեթէ ինք մեծցուցեր եւ դպրոց դրկեր էր Երուանդը, միշտ յուսալով թէ օր մը անոր դպրոցական վկայականով կ'ուրախանար եւ անոր շուքին տակ պատսպարուած քիչ մը օր, արեւ կը տեսներ: Օր մը...

Բայց շրջանաւարտ ելլելուն պէս տղան առեր զինուոր տարեր էին, հօրը վիճակին եւ մօրկան աղաչանքներուն առջեւ եւ ամէն բանի ականջ գոցելով:

Երուանդին մայրը հերոսական կին մը եղեր էր իր երիտասարդ օրերէն սկսեալ: Գիշեր ու ցորեկ աշխատեր էր իր տունը կանգուն պահելու, գաւակը »մարդ« ընելու եւ տան ուրագով շինուած սեղանը առանց հացի չթողելու համար:

Հիմա, երբ տղան ալ տարեր էին, անմխիթար վիճակի մը մատնուած՝ կ'ապրեր խաւարի մը գիրկը, լուցկիի մը լոյսին կարօտ վիճակի մը մէջ, քաղաքէն հեռու եւ այգեստանի մը հեռաւոր անկիւնը:

Հնարաւոր ճամբաներու անծանօթ, դրամական միջոցներէ հիմնովին զուրկ, այս անոքիկ մայրիկը լալէն ետ դարձեր էր տուն երբ ըսեր էին, թէ հայրենիքի գաւակն է, պետք է որ անոր պաշտպանութեան երթայ:

Խեղճուկ կինը ուրիշ անհամար մայրերու հետ չէր կրնար հարցնել, թէ »Բայց այս պատերազմս ի՞նչ է, մեր երկրին վրայ յարձակող, մեր քիթը արիւնոդ մը չկայ, աս ի՞նչ պատերազմ է... ան ալ մեր սահմաններէն հազարաւոր մղոն հեռու: Մեր երկրի դրան առջեւ թշնամիի շուք չկայ«:

Այսպէս տարիներով հազարաւոր Երուանդներ, Չարլիներ, Ճորճեր եւ Սթիվներ գացեր էին բանակ հեռաւոր, անանուն լեռներ եւ ձորեր...

սպաննելու համար ուրիշ անծանօթ եւ անմեղ պատանիներ... Երկու կողմերն ալ անթիւ դեռատի գերեզմաններ կը փակէին մինչդեռ հոս մեծափարթամ առաջնորդներ մեծաշռիկ եւ երագային հարսանիքներ կը սարքէին նոր փեսացուներ հրապուրելու համար իրենց աղջիկներուն:

Երուանդին հետ այսպէս դառն պատմութիւններ կը փոխանակէինք երբ կը յառաջանայինք, այգեստանի ծուռ ու մուռ ճամբաներէն:

Չէր գիտեր թէ հայրը անյուսալի վիճակի մէջ՝ հիւանդանոց տարուած էր եւ չունէրներու յարկաբաժինը նետուած: Մայրը, լեզուին անծանօթ ըլլալուն, չէր կրնար գիր, նամակ հնարաւորել: Պատահական բարեկամ մը պիտի գտներ որ իր սիրական գաւակին քանի մը տող գրեր: Այդ ալ շատ հազուադէպ էր:

Երբ տան մօտեցանք,

- Երուանդ,- ըսի,- դուն գլուխդ ցոյց մի՛ տար, պահուրտիր կառքին ետեւի աթոռին տակ որպէսզի մայրիկդ յանկարծակիի գալով յուզումէն չնուաղի: Հայ մայրերուն սիրտը այդպէս է: Գիտես դուն:

- Շիտակ ես,- ըսաւ,- ես ալ գիտեմ այդ. ու գլուխը ծռեց եւ մեծ վերարկուին տակ ծածկուեցաւ:

Այգիէն ներս անցանք:

Չինաւորց, փայտաշէն տնակ մը կար, հազիւ ոտքի վրայ մնալու կարող հարիւրամեայ ծերունիի մը ոտքերով, դողդոջուն եւ իյնալու մօտ:

Կառքին ձայնը արծագանգեց: Ծերունի մայրը պատուհանէն դուրս երկարեց գլուխը եւ զիս տեսնելով՝ գուրգուրանքով պոռաց.

- Յրամեցէք, հրամեցէք, գլխուս վրայ, վա՛յ, մեր տո՞ւնն ալ մարդ կու գայ եղեր: Ու սկսաւ փղծկիլ ու լալ:

- Մայրի՛կ, ես քեզ լացնելու չեկայ, լաւ լուրեր բերեր եմ: Կարելի է պատերազմը շուտով վերջանայ եւ Երուանդո տուն հասնի:

- Ո՛ր էր թէ, ո՛ր էր թէ... Աստուած բերնէդ լսէ, ես արդէն միևսակ տղուս համար կ'ապրիմ, խեղճ մարդս կ'ես մեռել... արդէն հիւանդանոցն է... ա՛լ ինչ մնաց: Ու լացը դարձաւ բարձրադաղակ...

- Յոյսդ մի՛ կտրեր, քաջ եղիր որ զաւակդ տեսնես, զաւակդ երջանիկ ընես:

Երուանդ քովս անհամբեր, վերարկուն նետեց, բարձրացաւ, դրան ձեռնակապը դարձուց եւ դուրս ցատկեց:

Մայրը տղան տեսնելուն լալագին աղաղակներով վագեց դուրս, աբալ-թափալ իջաւ փայտէ աստիճաններէն վար եւ նախ փռուցաւ գետին աղօթելու եւ հողը համբուրելու համար, երկրպագեց տիեզերքի արարչին առջեւ... տղան ալ անմիջապէս լալով մօրը մօտեցաւ ու վերցուց զայն...

Եւ երկու խօլավազ առուակներու նման մայր ու զաւակ իրարու խառնուած լացին ու համբուրեցին զիրար:

Մայրը հեկեկանքով կը պոռար. »...Իմ արեւս, իմ կեանքս, իմ անգին կաղանդչէքս, կաղանդչէքս...«:

Ես հոն կեցայ քարացած, աչքերս պղտոր ու թաց...:

2., Է., Ը. կարգեր

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՊԻՇԵՐ

ՄԵՏԱՔՍԷ

Թէ աշխարհում փակ դռներ կան, թող որ բացուեն այս գիշեր,
Ու Նոր տարին Նոր խնդութեամբ թող ներս մտնի այս գիշեր,
Թէ կան դատարկ, համր տներ՝ մանկան ճիչով թող լցուեն,
Ըվ փնտռում է սրտանց մէկին՝ յանկարծ գտնի այս գիշեր:

Թէ կան լացող, տխուր աչքեր, թող ծիծաղեն այս գիշեր,
Կանչող ձեռքերն իրար հասնեն, հրաշք ապրեն այս գիշեր:
Թէ կան սրտեր՝ չար նախանձով, դառնան բարի ու ներող,
Եւ ուրիշի ուրախ կեանքով խանդավառուեն այս գիշեր:

Թէ մոլորուած անցորդներ կան, դարձի թող գան այս գիշեր,
Սրբագործուած սիրով մտնեն իրենց օջախն այս գիշեր,
Թէ կան բախտի փշոտ ճամբէք, թող ծաղկունքով կանաչեն
Ու երջանիկ սպասումով բոլորն արբեն այս գիշեր...

Թէ աշխարհում պանդուխտներ կան, թող տուն դառնան այս
գիշեր,
Հայրենական յաւերժութեամբ ողջագուրուեն այս գիշեր,
Արարչագործ իմ ժողովուրդ, թող որ խմենք մինչեւ լոյս
Թափուող ձիւնի նման մաքուր խղճիդ կենացն այս գիշեր...

ԿԱՂԱՆԴԻ ԿԱՐԿԱՆԴԱԿ

2.Խ.

Աշխարհ խոշոր կարկանդակ մ'է

Որուն վրայ այս գիշեր

Գոյն գոյն ձեւ ձեւ մոմեր կան

Հագար անգամ բիր անգամ բիր - անհամար

Այնքան ատեն

Ծառերը մեր ՎՆ ծառերը ձեր - բոլոր Կաղանդ տօնողներու

ծառերն ամբողջ միացած ՎՆ

Եւ կը վառին միասին

Տարեդարձի կարկանդակին վրայ մեծ

Որմէ բաժին ունինք մենք - փշրանք մը լոկ կամ հիւլէ

Որմէ բաժին ունիք դուք ՎՆ խոշոր պատառ մը գուցէ

Որուն համար ամենքս մէկ տենչով տենչով մոմերու պէս կը

վառինք...

Աշխարհ խոշոր կարկանդակ մ'է մեզ ամենուս խոստացուած

Որուն վրայ այս գիշեր

Տարեդարձի մոմեր կան

Իր տարիքին ՎՆ մեր բոլորին ՎՆ թիւին չափ

Ու երբ յանկարծ կես գիշերին

Մեր ծառերուն դէմն անցած

Ծափ ու բաժակ կը զարնենք ՎՆ կ'ողջագուրուինք կը պարենք

Եւ անթեղուած ըղձանքներու հրուտ շունչով ամենքս մէկ կը

փչենք ՎՆ

Ամենօրեայ մեր լոյսն է որ քչիկ մըն ալ կը մարի

Երազն է որ կը ծերանայ աշխարհին չափ - մեզի չափ

Կարկանդակը տարի մըն ալ կ'օթեկնայ

28-12-1965

Գ., Դ., Ե. կարգեր

ՇՆՈՐՀԱԽՈՐ

ՅԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Շնորհաւո՛ր տարի ասե՛ք մենք աշխարհին,
Շնորհաւո՛ր տարի ասե՛ք նրանց,
Ովքեր 2020-ի տարին են զարկերակը դարի,
Խաղաղութեան մաքուր առագաստը բացած:

Ասե՛ք բոլո՛ր նրանց, ովքեր լոյս են տանում,
Ովքեր յոյս են փռում ճամբաներին բոլոր,
Ովքեր ձմրան միջից գարուն են խոստանում,
Խոր կիրճերից հանում արեւները մեր նոր:

Շնորհաւո՛ր ասե՛ք, բարի սրտով խօսե՛ք,
Բարի ձեռքով խմե՛ք այս բաժակը նորից,
Բարի կամքով դարի ոտնաձայնը լսե՛ք,
Շնորհաւոր ասե՛ք նորի՛ց, նորի՛ց:

Գ., Դ., Ե. կարգեր

ԵՐԳ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՐԶԵԱՆ

Կարօտներով ծանրաբեռ եկաւ, եկաւ նոր տարին,
- Տե՛ս, այս գիշեր քեզ համար թողել եմ ես դուռս բաց.
Մոմերն ահա հիւծուում են սպասելով քո դարձին,
Անրջում են ձիւնի տակ եղեւնիները կանաչ:

Դու դեռ չեկած՝ խնդութեամբ եկաւ բարիքդ ամբողջ,
Աչքերի մէջ մայրիկիս խաղաղութիւն, խնդութիւն:
Եղբօրս ձայնի մէջ զուլալ եւ ծիծաղի մէջ առողջ
Շողում ես դու որպէս յոյզ ու քաղցրացած լիութիւն:

Օջախիս մէջ հայրենի բերրի խորհուրդ ու կրակ
Եւ ձիւնի հետ դու իջար իբրեւ երազ կուսական,
Իմ սեղանի վրայ դու դարձար երգ ու յիշատակ,
Յորդեցրիր իմ գինին յուզումներովը վաղուան:

Չ., Է., եւ Ը. կարգեր

SOLUՉԱՆԳ

2. ԽՐԱԽՈՒՆԻ

Ամեն տարի
Տօնածառին երբ նայիմ
Ես գայն տարբեր կը տեսնեմ ՎՆ

ինձ կը թուի թէ լեռ մ'է ան հզօր յոյսի հաւատքի
թէ բուրգ մըն է - կոյտ կարօտի ու սիրոյ
կամ սանդուխն է դալարաւետ որ դեպի վեր կը տանի...

Այս տարի
Ան ինձ համար զանգակ մըն է կանաչացած հին արոյրէ
ոսկի արծաթ դրուագներով
գոյն գոյն ձեւ ձեւ գոհարներով աշխատուած

Որ ով գիտէ
Հայրենական ո՞ր լեռներու կողին թառած սուրբ վանքէն

Ո՞ր տաճարէն հոյազանգ
Դարակուտակ ղօղանջներն իր սեգ կուրծքին տակ ամփոփած
Եկեր բազմեր է այստեղ ՎՆ թուխսի նստած հաւու պէս
Ու կը թողու որ զարդարեն տօնախմբէն գովերգէն
Մինչդէռ ինք
Ականջ դրած կը սպասէ
Հարուածներուն որոնք կտուց պիտի զարնեն անխափան
Ճակատագրի ժամացոյցէն անյեղի...

Ծառին վրայ
Փոքրիկ նաշխուն զանգակիկները բոլոր
Կը թրթռան կը դողդղան կը թրվռան արդէն իսկ
Ղօղանջով մը հեռաւոր...

21-12-1985

Չ., Է., եւ Ը. կարգեր

ԲԵԹՂԵՏԵՄԻ ԱՍՏՂԸ

Մ. ԻՇԽԱՆ

Բեթղեհեմի աստղը պայծառ
Ալ չի շողար
Երկինքն ի վար՝
Սուրբ մտւրին վրայ խոնարի:

Բեթղեհեմի աստղը անհուն
Ո՞ր ամպին տակ
Բազմակուտակ
Այսպէս անհետ մտաւ ի քուն:

Բեթղեհեմի աստղին տեղ հին
Ամէն ժամ նոր
Արիւնածոր
Աստղեր կու գան ու կը մարին...

Բեթղեհեմի աստղը սակայն
Միշտ կը մնայ
Հոգեմայ
Միակ ժպիտն աստուածութեան:

Բեթղեհեմի աստղը պայծառ՝
Աչքը մարդուն
Քուն թէ արթուն
Դեռ կ'որոնէ ցնորահար...

Բեթղեհեմի աստղը վառող
Ո՞վ անհուն Լոյս
Ուղեկորոյս
Մարդոց դարձեալ տո՛ւր յոյսի շող:

Բեթղեհեմի աստղը թաքուն
Կախե՛ նորէն
Մեր երկինքէն
Եւ տո՛ւր յերկիր խաղաղութիւն...

Գ, Դ., եւ Ե. կարգեր

ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

ՍԱՐՄԵՆ

Կանգնել եմ ահա Նոր Տարուայ շեմքին՝
Յոգիս տենչերով, երազներով լի.
Գալիքի ճամբան կանչում է կրկին՝
արարիչ ու խենթ խիզախումների:

Ու թելեր առած հայրենի հողէն,
Յոյսերիս հուրը պահելով անմեռ՝
Գնում եմ դէպի բարձունքն աստղալից,
Դէպի նոր ափեր, նոր հեռաստաններ:

Ինձ չի մօտենայ ցուրտը ծերութեան,
Մաքառման գէլքս ես չեմ դնի ցած,
Մինչեւ չտեսնեմ, իմ մա՛յր Յայաստան,
Իղձերդ բոլոր իրականացած:

Գ, Դ., եւ Ե. կարգեր

ՆՈՐ ՏԱՐԻ

Բ. Թ.

Խաղով ու տաղով,
Ծափ ու ծիծաղով
Ահա՛ եկաւ նոր տարին,
Բերաւ երգեր,
Անոյշ միրգեր
Մեր երջանիկ աշխարհին:

Կ'ապրինք ուրախ ու ինդուն
Տօնածառին շուրջ-բոլոր,
Տօնածառն է փայլփլուն՝
Իր աչքերով բիւրաւոր:

Կ'երգենք ահա՛ ցնձագին,
Մենք՝ դեռատի պարիկներ,
Կարծես աստղերն երկնքին
Մեր բակին մէջ են ինկեր:

Հագած ճերմակ վերարկուն՝
Ձմեռ պապին մեր բարի
Կ'ըսէ ձայնովն իր հնչուն.
- Շնորհաւոր նոր տարի...
Գ., Դ., Ե. կարգեր

ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ ՍԵՒԱՄՈՐԹ Է

Յ. ԳԵՂԱՐԴ

Քանի մը օրէ ի վեր, մայրս ինծի կ'ըսեր, որ Կաղանդը մօտ էր, ու եթէ խելօք կենայի՝ »աղուոր բաներ« պիտի ունենայի: Առաջին տարին ըլլալով, փոքրիկ սիրտս ալեկոծ, հարց կու տայի՝ ո՞վ էր »Կաղանդ Պապան«, ազգակա՞ն էր մեզի, ուրկե՞ր պիտի գար, գիտե՞ր մեր տունը, կրնա՞ր շալկել բոլորին խաղալիքները:

Մայրս շատ արժանիքներ կը վերագրեր այդ անծանօթին. կ'ըսեր, թէ խոշոր տետրակի մը մէջ գրած էր բարի ու չար տղոց անուններն ու հասցէները. չարերը պիտի գրկեր, բարիները վարձատրեր...

Սպասման այդ երեկոներէն մէկը, գացած էինք հանրային պարտեզ, միակը Պէյրուֆի մէջ՝ Ուաթ-ուաթ թաղին մօտ, եւ որ հիմա ալ կայ:

Կը քալէինք ծառուղիներէն, երբ հանդիպեցանք ծառի մը բունին կռթնած սեւ արձանի մը: Մօտեցանք. ան սկսաւ ժպտիլ ու շարժիլ դէպի մեզի: Բնագղաբար մօրս ձեռքը աւելի սեղմեցի. իսկ մայրս ու իր ընկերուհին կանգ առին արդէն, »Յիսուս Զրիստոս« մրմնջելով:

Մօտեցողին գլուխը կարմիր թաղիքէ գլխարկ մը կար, մէջքին՝ փայլուն սուր: Բայց մեր վախը երկար չտևեց. աչքերը չար չէին, քաղցրութիւն մը ունէին. ճերմակ ակռաները լայն շրթներուն միջեւ կը փայլէին:

Երբ խափշիկ զինուորը մեզմէ երկու մէթր անդին կանգ առաւ, եւ հասակը հասակիս հաւասարեցնելու համար կկուզ ըրաւ, մայրս անշուշտ չհասկցաւ անոր ըսածը, բայց մայրական բնագոյով զգաց. ինծի գուրգուրալ ուզող անծանօթը գաւակի, ընտանիքի կարօտէն միացող սիրտ մը ունէր... ու քաջալերելով՝ »Գնա, տղա՛ս,- ըսաւ,- բարի է«:

Տոտիկ-տոտիկ մօտեցայ. ան արդէն հանած էր գլխարկը, մէջը դրած խոշոր շոքուլա մը, նաեւ խորոված շագանակ, ու կ'երկարեր ինծի: Մօրս ժպտուն աչքերը հրաւիրեցին զիս որ առնեմ:

Ի՛նչ ուրախ էր խափշիկը, ու ինչ անուշ՝ մատներուն դողը, երբ զանոնք գուրգուրանքով կը դպցներ մագերուս ու այտերուս:

Չգոհացաւ շոքուլայով: Ձեռքը տարաւ ծոցը, եւ դուրս քաշեց սեւափայլ խաղալիք մը, որ տեղաւորեց ձեռքիս մէջ:

Տարիներ ետք միայն պիտի հասկնայի որ այդ արձանիկը՝ լայն շրթունքով, սուր ականջներով, ճերմակ ու տարօրինակ աչքերով՝ սեւ փղոսկրէ թանկագին զարդ մըն էր, գուցէ զինուորին իսկ ձեռքով շինուած, հայրենի Ափրիկէի մէկ անկիւնը...

Քիչ ետք, երբ միացայ մօրս, առածներս գրպանած, ու բռնեցիք վերադարձի ճամբան, սեւամորթ զինուորը դեռ ծառին տակ էր, կարօտավառ կը նայէր ետեւես, ու ձեռք կ'ըներ:

»Աստուած տունի-ընտանիքի տերը դարիպ չընէ՛«, - ըսաւ մօրս ընկերուհին:

»Մամա՛, - հարցուցի խանդավառ, - ա՞ն է Կաղանդ Պապուկը«:

»Տեսա՞ր, բարի եղար, ու Կաղանդ Պապան ինչե՛ր դրկեց քեզի«, վրայ բերաւ մայրս՝ օգտուելով առիթէն:

Բայց ես մօրս պատասխանին չէի կապեր համոզումս:

Հանրային պարտեզի ծառին տակ շոքուլա, շագանակ ու խաղալիք տուող խափշիկ բարի զինուորը իմ մատղաշ մտքիս մէջ արդէն առած էր Կաղանդ Պապուկի անջնջելի գիծեր: Կաղանդ Պապուկ մը, որ հեռու իր գաւակներէն ու երդիքէն, կը սիրէր բոլորին գաւակները, բոլոր երդիքները:

Գ., Դ., Ե. կարգեր

ՄԱՅՐԻԿԻ ՄԸ ԿԱՂԱՆԴՉԵՔԸ

ՎԱՅԷ ՀԱՅԿ

Նոր Տարուան եւ Ծնունդի գուարթ օրերուն էր: Աննման խանդավառութիւն կար բոլոր տուներուն եւ գրեթէ բոլոր սրտերուն մէջ: Նուէրներու եւ փոխ առնուած շնայլ մաղթանքներու անձրեւ մըն էր բռներ եւ կու գար անդադար:

Կէսօրէ մը յետոյ, իրիկուան աղօտ շողերը տակաւին չսկսած՝ երկաթուղիի մը կայարանէն կ'անցնէի արտօրանքով:

Նշմարեցի որ զինուորներու հսկայ բազմութիւն մը հաւաքուած է եւ կը շարժի անհանդարտ ծովու ալիքներուն նման:

Կու գա՞ն արդեօք թէ կը հեռանան, խորհեցայ եւ ինքնաշարժը կեցուցի:

Այս կայարանը մեր քաղաքի կեդրոնական մասին մէջ շինուած է: Օրական հազարաւոր անցորդներ կու գան ու կ'անցնին: Ո՛չ ոք մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դարձնէ զայն:

Բայց զինուորական համազգեստներու մէջ մտած պատանիներու ստուար այս բազմութիւնը արտակարգ տեսարան մը կը բանար:

Նկատեցի որ ամէն անցորդ այդ կայարանի փողոցէն անցնելու ատեն իր քայլերը՝ եւ եթէ ինքնաշարժով է, իր անիւները կը դանդաղեցնէ, աչքերը լայն-լայն կը բանայ եւ տեսակ մը անհաճելի դիմագիծ մը առնելով կը շարունակէ ճամբան: Իրաւամբ մարդիկ կ'ատեն պատերազմը:

Այդ պահուն իմ ուշադրութեանս առարկան դարձաւ զինուորներու խումբէն անջատուած եւ ցանկապատի մը կռթնած տղեկ մը, որ ծանօթ երեւցաւ ինծի, եւ որ մտածկոտ եւ անհամբեր սպասումի մը մէջ ամփոփուած կեցեր էր միս-մինակ:

Քալեցի ուղղակի իր մօտ, ծանօթ էր: Ձեռքս երկարեցի ժպտագին եւ՝

- Հըլօ՛, Երուանդ, ինչո՞ւ կը սպասես հոս, ի՞նչպէս ես:

- Օ՛, - ուշաբերեցաւ տղան եւ ուրախութիւնը յայտնեց, - քանի մը օրուան համար վագանցի դրկեցին մեզ, չեմ գիտեր, »Ծնունդ«, »Նոր Տարի« է ըսին... քանի մը հոգի հոս պիտի ձգեն եւ մեկնին ուրիշ տեղեր: Ես ալ տուն երթալու եմ... բայց...

- Մէկը պիտի գա՞յ քեզ առնելու:

- Չէ՛, մեր կողմերը գիտես, 15-18 միոն հեռու է, հանրային կառք չերթար, թեքսի մը առնելու համար ալ մեծ գումար կը պահանջեն, եւ ես, շիտակը խօսելով, վրաս դրամ չունիմ:

- Հոգ մի՛ ըներ, Երուանդ, ես կը տանիմ. շատ լաւ գիտեմ ձեր այգին ալ, տունն ալ, հայրիկդ ու մայրիկդ ալ:

- Այո, գիտեմ, շնորհակալ եմ. ի՞նչ ընեմ, բանակին մէջ ուտելիքը լաւ է, ամսական բան մըն ալ կը վճարեն, բայց ամէնն ալ մայրիկիս կը դրկեմ: Սիւալ չհասկնաս, ատոր համար վրաս շատ քիչ դրամ կրնամ պահել, - ատելցուց:

Համակրելի հայ տղեկ մըն էր Երուանդ, այդ խօսքերուն վրայ համարումս կրկնապատկուեցաւ: Գիտէի որ հազիւ տասը էջքըր հող ունէին, մշտապէս ծանր պարտքի տակ: Հայրը կէս հիւանդ, տղուն զինուոր տարուելէն յետոյ աւելի ծանրացած ու փոխադրուած էր չքաւորներու հիւանդանոցը: Մայրը կը մնար միս-միսակ, տանջալից կեանքի մը տակ կքած: Գրեթէ ինք մեծցուցեր եւ դպրոց դրկեր էր Երուանդը, միշտ յուսալով թէ օր մը անոր դպրոցական վկայականով կ'ուրախանար եւ անոր շուքին տակ պատսպարուած քիչ մը օր, արեւ կը տեսներ: Օր մը...

Բայց շրջանաւարտ ելլելուն պէս տղան ամեր զինուոր տարեր էին, հօրը վիճակին եւ մօրկան աղաչանքներուն առջեւ եւ ամէն բանի ականջ գոցելով:

Երուանդին մայրը հերոսական կին մը եղեր էր իր երիտասարդ օրերէն սկսեալ: Գիշեր ու ցորեկ աշխատեր էր իր տունը կանգուն պահելու, գաւակը »մարդ« ընելու եւ տան ուրագով շինուած սեղանը առանց հացի չթողելու համար:

Հիմա, երբ տղան ալ տարեր էին, անմխիթար վիճակի մը մատնուած՝ կ'ապրեր խաւարի մը գիրկը, լուցկիի մը լոյսին կարօտ վիճակի մը մէջ, քաղաքէն հեռու եւ այգեստանի մը հեռաւոր անկիւնը:

Հնարաւոր ճամբաներու անծանօթ, դրամական միջոցներէ հիմնովին զուրկ, այս անոքիկ մայրիկը լալէն ետ դարձեր էր տուն երբ ըսեր էին, թէ հայրենիքի գաւակն է, պետք է որ անոր պաշտպանութեան երթայ:

Խեղճուկ կինը ուրիշ անհամար մայրերու հետ չէր կրնար հարցնել, թէ »Բայց այս պատերազմս ի՞նչ է, մեր երկրին վրայ յարձակող, մեր քիթը արիւնոդ մը չկայ, աս ի՞նչ պատերազմ է... ան ալ մեր սահմաններէն հազարաւոր մղոն հեռու: Մեր երկրի դրան առջեւ թշնամիի շուք չկայ«:

Այսպէս տարիներով հազարաւոր Երուանդներ, Չարլիներ, Ճորճեր եւ Սթիվներ գացեր էին բանակ հեռաւոր, անանուն լեռներ եւ ձորեր...

սպաննելու համար ուրիշ անծանօթ եւ անմեղ պատանիներ... Երկու կողմերն ալ անթիւ դեռատի գերեզմաններ կը փակէին մինչդեռ հոս մեծափարթամ առաջնորդներ մեծաշռիւղ եւ երազային հարսանիքներ կը սարքէին նոր փեսացուներ հրապուրելու համար իրենց աղջիկներուն:

Երուանդին հետ այսպէս դառն պատմութիւններ կը փոխանակէինք երբ կը յառաջանայինք, այգեստանի ծուռ ու մուռ ճամբաներէն:

Չէր գիտեր թէ հայրը անյուսալի վիճակի մէջ՝ հիւանդանոց տարուած էր եւ չունեւորներու յարկաբաժինը նետուած: Մայրը, լեզուին անծանօթ ըլլալուն, չէր կրնար գիր, նամակ հնարաւորել: Պատահական բարեկամ մը պիտի գտներ որ իր սիրական գաւակին քանի մը տող գրեր: Այդ ալ շատ հազուադէպ էր:

Երբ տան մօտեցանք,

- Երուանդ,- ըսի,- դուն գլուխդ ցոյց մի՛ տար, պահուըտիր կառքին ետեւի աթոռին տակ որպէսզի մայրիկդ յանկարծակիի գալով յուզումէն չնուաղի: Հայ մայրերուն սիրտը այդպէս է: Գիտես դուն:

- Շիտակ ես,- ըսաւ,- ես ալ գիտեմ այդ. ու գլուխը ծռեց եւ մեծ վերարկուին տակ ծածկուեցաւ:

Այգիէն ներս անցանք:

Չինաւորց, փայտաշէն տնակ մը կար, հազիւ ոտքի վրայ մնալու կարող հարիւրամեայ ծերունիի մը ոտքերով, դողդոջուն եւ իյնալու մօտ:

Կառքին ձայնը արծագանգեց: Ծերունի մայրը պատուհանէն դուրս երկարեց գլուխը եւ զիս տեսնելով՝ գուրգուրանքով պոռաց.

- Յրամեցէք, հրամեցէք, գլխուս վրայ, վա՛յ, մեր տո՞ւնն ալ մարդ կու գայ եղեր: Ու սկսաւ փղծկիլ ու լալ:

- Մայրի՛կ, ես քեզ լացնելու չեկայ, լաւ լուրեր բերեր եմ: Կարելի է պատերազմը շուտով վերջանայ եւ Երուանդո՞ տուն հասնի:

- Ո՛ր էր թէ, ո՛ր էր թէ... Աստուած բերնէ՛ լսէ, ես արդէն միևսակ տղուս համար կ'ապրիմ, խեղճ մարդս կ'ես մեռել... արդէն հիւանդանոցն է... ա՛լ ինչ մնաց: Ու լացը դարձաւ բարձրադաղակ...

- Յոյսդ մի՛ կտրեր, քաջ եղիր որ զաւակդ տեսնես, զաւակդ երջանիկ ընես:

Երուանդ քովս անհամբեր, վերարկուն նետեց, բարձրացաւ, դրան ձեռնակապը դարձուց եւ դուրս ցատկեց:

Մայրը տղան տեսնելուն լալագին աղաղակներով վագեց դուրս, աբալ-թափալ իջաւ փայտէ աստիճաններէն վար եւ նախ փռուցաւ գետին աղօթելու եւ հողը համբուրելու համար, երկրպագեց տիեզերքի արարչին առջեւ... տղան ալ անմիջապէս լալով մօրը մօտեցաւ ու վերցուց զայն...

Եւ երկու խօլավազ առուակներու նման մայր ու զաւակ իրարու խառնուած լացին ու համբուրեցին զիրար:

Մայրը հեկեկանքով կը պոռար. »...Իմ արեւս, իմ կեանքս, իմ անգին կաղանդչէքս, կաղանդչէքս...«:

Ես հոն կեցայ քարացած, աչքերս պղտոր ու թաց...: